ՀՐԱՎԵՐ N Տ 2

24.11.2016թ.

2016թ. Նոյեմբերի 24-ին «Իրավաբենների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, այսուհետ՝ ԻՀԱ, պաշտոնական կայքում (www.armla.am) հրապարակված հայտարարության հիման վրա տրամադրում ենք Ձեզ սույն հրավերը:

Գնման առարկա է հանդիսանալու Եվրոպական միության կողմից հնրավոր ֆինանսավորմամբ իրականացվելիք «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով նախատեսված արտաքին ֆինանսական աուդիտը:

Հայտը պետք է պարունակի հղում սույն հրավերի վրա, Գնման առարկայի գինը, պատրաստման ժամկետը և որակի մասին տեղեկությունները:

Մասնակցության համար Ձեր կողմից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտ
2. Հայտարարություն
3. Կազմակերպության կանոնադրություն (պատճեն),
4. Իրավաբանական անձի գրանցման վկայականը և ներդիրը (պատճեն),
5. ՀՎՀՀ-ի (պատճեն),

Մրցույթի հաղթող կճանաչվի այն Կազմակերպությունը, որը կներկայացնի ամենացածր գնով, սեղմ ժամկետներում և պահանջվող որակով Գնման առարկայի պատրաստման հայտ:

Խնդրվում է հաշվի առնել, որ արտաքին ֆինանսական աուդիտի համար նախատեսված վճարումը նախատեսվում է կատարել Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ, որը ազատվելու է ԱԱՀ-ից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոհամայնքի միջև կնքված 2006 թվականի ապրիլի 4-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի, վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից և 2009թ-ի սեպտեմբերի 23-ին ընդունված 1112-Ն որոշման և նրա հավելվածի:

Հայտերը պետք է ուղարկվեն կամ ներկայացվեն ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2 հասցեով՝ մինչև 2016թ. Դեկտեմբերի 5-ը ժամը 18:00-ն:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները կարող եք ստանալ ԻՀԱ գնումների հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանից՝ զանգահարելով 010 580298 հեռախոսահամարով:

Հայտերը բացվելու են 2016թ. Դեկտեմբերի 6-ին, ժամը 12:00-ին: